ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » հունիսի 2013թ. N -Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Արամ Սուքիասյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Արամ Սուքիասյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ա. Սուքիասյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ա. Սուքիասյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա Ր Ա Մ Ս Ո Ւ Ք Ի Ա Ս Յ Ա Ն
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
2002-2005՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա, մասնագիտացումը՝ պետական ծառայող, պետական կառավարում և տեղական ինքնակառավարում
1993 – 1998՝ Երևանի Թատերական Արվեստի Պետ. Ինստիտուտ /երաժշտական թատրոն/

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ
2011- ից Երևանի քաղաքապետի խորհրդական, մշակութային ծրագրերի համակարգող
2009 – 2011՝ «ԱՐԱՐԱՏ» մշակութային հեռուստաալիքի գլխավոր պրոդյուսեր
2007 – 2009՝ Հայաստանի Պետական Ֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավար
2003 – 2005՝ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի փոխտնօրեն
1998 – 2000՝ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվ. պետ. թատրոնի դերասան-ռեժիսոր

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
սցենարի հեղինակ և բեմադրող ռեժիսոր
2012 - «Երևան - գրքի համաշխարհային մայրաքաղաք» բացման և փակման հանդիսավոր միջոցառումներ
-Հայաստանի պետական կամերային նվագախմբի 50 -ամյա հոբելյանական համերգ
- «Հայակ 2012»ազգային կինոմրցանակաբաշխություն
- Է. Հովհանիսյան «Սասունցի Դավիթ»բալետ–օպերայից «Դավթի ծնունդ»
2011 - «Հերոսական բալլադ» երաշժտաթատերական մասսայական հանդիսություն՝ նվիրված ՀՀ անկախության 20 -ամյակին, Հանրապետության հրապարակ
- Ալ. Հարությունյան՝Սայաթ- Նովա՝ օպերա
- «Նորայր Մեհրաբյան 70», «Անդրանիկ Մարգարյան 60» հոբելյանական երեկոներ
2010 -« Ուսուցչի օր» տոնական հանդիսություն
- «Կինոաշուն» փառատոն ծրագրի հանդիսավոր բացման և փակման ծրագրեր
2009 - «Սոս Սարգսյան 80» հոբելյանական երեկո
- «Սպորտային նվաճումներ 2009 ՀԱՕԿ»
2008- - «Սարդարապատ 90»- կառավարական ծրագիր, երաժշտաթատերական ներկայացում
- «Վազգեն Ա Վեհափառ Հայրապետ 100», «Վիկտոր Համբաձումյան 100» - կառավարական
հոբելյանական երեկոներ
-«Երևանի օր. 2790» տոնական հանդիսություն
- «Հայ օլիմպիականների մեծարման երեկո»
-«Պարի միջազգային օր» տոնական համերգ-ներկայացում
- ՝Երևան- գունազարդ երկինք՝ միջազգային օդագնացության փառատոն
2007 - «Վանուշ Խանամիրյան 80», «Ֆրունզե Դովլաթյան 80»,«Ժիրայր Ավետիսյան 80», «Վլադիմիր Աբաջյան 80»- հոբելյանական հանդիսություններ
- Շուշիի ազատագրման 15 - ամյակ (Ստեփանակերտ - Վերածննդի հրապարակ)

2006 - ՀՀ Անկախության 15-ամյակին նվիրված «Ոգու տոն» երաժշտաթատերական, մասսայական հանդիսություն / Վ. Սարգսյան մարզադաշտ/
- «Խորեն Աբրահամյան» հուշ-երեկո
2001 - «Գրիգոր Լուսավորիչ» ռոք-օպերա
1999 - «Ճակատագիր» ըստ Դե. Ֆիլիպոյի հեռուստաներկայացում (ԼՂՀ հեռուստատեսություն)
- «Անկախ Արցախ» մասսայական տոնակատարություն (Ստեփանակերտ)

ՖԻԼՄԱԳՐԱՖԻԱ

2010-2011՝«Թափառում» գեղարվեստական լիամետրաժ ֆիլմ ռոք-օպերա - հեղինակ-պրոդյուսեր

2010 ՝ «Հայ կինոյի ոդիսականը» ֆիլմ-էսսե- սցենարիստ, ռեժիսոր

2010՝ «Նպատակներիս ծառը» փաստագրական ֆիլմ նվիրված Աշոտ Նավասարդյանին– սցենարիստ, ռեժիսոր
2008՝ «Ծննդյանդ խորհուրդը» ֆիլմ-էսսե նվիրված Անդրանիկ Մարգարյանին - սցենարիստ, ռեժիսոր
2008՝ «Վազգեն Ա Վեհափառ Հայրապետ» ֆիլմ-էսսե- սցենարիստ, ռեժիսոր

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
2006-ից՝ Երևանի Պետական կոնսերվատորիայի և Երևանի Թատրոնի և Կինոյի Պետական Ինստիտուտի խորհուրդների անդամ
2009-ից՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կոլեգիայի անդամ
2006-ից՝ Հայաստանի Երիտասարդության Ազգային Խորհրդի / ՀԵԱԽ / նախագահ
2002-ից՝ «ԱՍՔ» մշակութային կենտրոնի նախագահ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ
2012՝«Արպա»հոլիվուդյան կինոփառատոն- լավագույն սցենարի հեղինակ
2011 ՝Գեներալ Մադաթովի շքանշան
2010 ՝«Ոսկե Պրահա» մրցանակ միջազգային հեռուստաարտադրանքի փառատոն
2006՝ՀՀ Վարչապետի մեդալ

Ծննդյան տարեթիվ՝ 27 փետրվարի 1976 թ.

Ընտանեական դրություն՝ ամուսնացած, երկու տղա

Զինվորական ծառայություն՝ 1998 – 2000 ԼՂՀ զինված ուժեր